ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՆԱՀԻՏ ՔԱՐԻՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 135-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 235-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 301-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Անահիտ Քարիմյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 135-րդ հոդվածի 1-ին մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասի և 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2024 թվականի օգոստոսի 22-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Անահիտ Քարիմյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 135-րդ հոդվածի 1-ին մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասի, 301-րդ հոդվածի 1-ին մասի թիվ ԵՇԴ/0072/04/17 դատական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կիրառված մեկնաբանությունը, համաձայն որի՝ միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռն արդեն իսկ բավարար է անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի ծագման համար, ճանաչել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵՇԴ/0072/04/17 սնանկության և թիվ ՍՆԴ/0024/02/19 քաղաքացիական գործերի դատավարական նախապատմությունները՝ Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, 135-րդ հոդվածի 1-ին մասը, 235-րդ հոդվածի 1-ին մասը և 301-րդ հոդվածի 1-ին մասն իր նկատմամբ կիրառվել են Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող մեկնաբանությամբ:

Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ իրավական հարցադրումները.

1. արդյո՞ք անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքը կարող է ծագել այդ իրավունքը վերականգնող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ անկախ այդ իրավունքի պետական գրանցման փաստից:

2. Արդյո՞ք անշարժ գույքի նկատմամբ կարող է ծագել գրավի իրավունքն այն պարագայում, երբ դեռևս այդ նույն գույքի նկատմամբ շարունակում է գործել նույն անձի սեփականության իրավունքը:

3. Արդյո՞ք սնանկության գործի շրջանակներում կարող է գրանցվել պարտատիրոջ ապահովված պահանջի իրավունքն այն պարագայում, երբ ապահովված իրավունքի առարկայի նկատմամբ գրանցված է պարտատիրոջ սեփականության իրավունքը:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթներն իր նկատմամբ կիրառվել են Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված՝ որոշակիության սկզբունքին հակասող մեկնաբանությամբ, քանի որ մի կողմից՝ օրենքով սահմանված է հստակ և իմպերատիվ իրավակարգավորում, որի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից, իսկ մյուս կողմից՝ ՀՀ սնանկության դատարանը և Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գույքի նկատմամբ գրավի իրավունքի ծագման համար բավարար են համարել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը:

Դիմողը նշում է, որ իրավակիրառ պրակտիկայում ՀՀ դատարանները նույնացրել են անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի «ծագման հիմք» և «ծագման պահ» հասկացությունները, քանի որ թիվ ՍՆԴ/0024/02/19 քաղաքա-

ցիական գործով Սնանկության դատարանի 2022 թվականի հունիսի 29-ի վճիռը հանդիսացել է բանկի գրավի իրավունքի ծագման հիմքը, սակայն այդ վճիռն օրինական ուժի մեջ մտնելով՝ ամենևին էլ չի ծագել տվյալ բանկի գրավի իրավունքը: Հավելելով՝ Դիմողը պնդում է, որ բանկի գրավի իրավունքը կարող էր ծագել միայն դրա պետական գրանցման պահից, ինչը մինչ օրս տեղի չի ունեցել:

Ամփոփելով՝ Դիմողը եզրահանգում է, որ թիվ ԵՇԴ/0072/04/17 սնանկության գործի շրջանակներում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված՝ որոշակիության սկզբունքին, քանի որ տվյալ մեկնաբանությամբ նույնացվել են գրավի իրավունքի «ծագման հիմք» և «ծագման պահ» հասկացությունները՝ թիվ ՍՆԴ/0024/02/19 քաղաքացիական գործով Սնանկության դատարանի 2022 թվականի հունիսի 29-ի վճիռը համարելով նաև գրավի իրավունքի ծագման պահ:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, ***դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:***

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների*

ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով հարկ է փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(...) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝* ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման:*** *Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ* ***Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրաիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:***

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները և Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, ինչը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին, 135-րդ հոդվածի 1-ին մասին, 235-րդ հոդվածի 1-ին մասին և 301-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանությունը, որի կապակցությամբ հարկ է արձանագրել հետևյալը.

թեև Դիմողը վկայակոչել է Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված՝ որոշակիության սկզբունքի խախտման վերաբերյալ պնդումներ, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստը, հետևաբար նաև՝ տվյալ փաստի և վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 79-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում այն ինքնին չի կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող է դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո, ինչը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով չի հիմնավորվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ

մասին, 135-րդ հոդվածի 1-ին մասին, 235-րդ հոդվածի 1-ին մասին և 301-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասությունը Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքին, հետևաբար և՝ Սահմանադրության 79-րդ հոդվածին:

Այսինքն՝ **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, որը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

3.2. *Դիմողի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ հարկ է արձանագրել նաև հետևյալը.*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով**

կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:

Այսինքն՝ **Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և (կամ) դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության գնահատումը:**

Քննարկվող համատեքստում, հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին, 135-րդ հոդվածի 1-ին մասին, 235-րդ հոդվածի 1-ին մասին և 301-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) ՀՀ սնանկության դատարանը 12.07.2023թ.-ին գրանցել է բանկի պահանջը որպես ապահովված պահանջ՝ հիմք ընդունելով թիվ ՍՆԴ/0024/02/19 գործով Դատարանի 29.06.2022թ.-ի վճիռը: Իսկ Վերաքննիչ դատարանը, իր որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ թիվ ՍՆԴ/0024/04/19*[1] *գործով կայացված վճռով վերականգնվել է «Արարատբանկ» ԲԲԸ-ի գրավի և հաջորդող գրավի իրավունքը, անտեսել է այն փաստը, որ դատարանի վճիռն այդպես էլ չի կատարվել և ՀՀ կադաստրի կոմիտեում Երևան քաղաքի, Ջրվեժ, Մայակ թաղամաս 3/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ չի կատարվել «Արարատբանկ» ԲԲԸ-ի գրավի իրավունքի պետական գրանցում»:*

---

[1] Հարկ է նշել, որ Դիմողի կողմից սույն հատվածում թույլ է տրվել վրիպակ: Մասնավորապես՝ որպես գործի համար Դիմողը նշել է ՍՆԴ/0024/04/19, մինչդեռ, խնդրո առարկա գործի համարն է ՍՆԴ/0024/02/19:

Դիմողը նաև նշել է, որ *«(...) չէր կարող գրանցվել Բանկի ապահովված պահանջի իրավունքը, երբ Բանկը հանդիսանում է նշված գույքի սեփականատեր, փաստացի ստացել է իր պահանջների բավարարումը և գումարն այդպես էլ ետ չի վերադարձրել և դեռ ավելին՝ չկա ոչ մի խոչընդոտ ցանկացած պահի այդ գույքն օտարելու համար»:*

Վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները ևս՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինս **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին, 135-րդ հոդվածի 1-ին մասին, 235-րդ հոդվածի 1-ին մասին և 301-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են ՀՀ դատարանների, մասնավորապես՝ Սնանկության դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի **գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով ողջ վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատում, այլ Սնանկության դատարանի և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, որը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման նաև՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Անահիտ Քարիմյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 135-րդ հոդվածի 1-ին մասի, 235-րդ հոդվածի 1-ին մասի և 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 սեպտեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-138